

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու

առաջարկությունների վերաբերյալ

08.10.2015թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ **7.744**
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	25	0.3
դիմում	6.177	79.7
բողոք	1.542	19.9
կրկնակի	390	5.1
կոլեկտիվ	54	0.6

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ **1.563**

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	820	52.4
բողոք	743	47.5

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	55	0.7
կոմունալ-կենցաղային	5	0.06
շինարարական	6	0.07
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	1	0.01
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	127	1.6
առողջապահության	78	1.1
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա		
ֆինանսական	461	5.9
օրենսդրական	110	1.4
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	131	1.6
ապարատային		
այլ հարցեր	6781	87.5
սեփականաշնորհում	7	0.09

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2015Թ. ԵՐՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 7744 նամակներից մոտ 0.3%-ը եղել են առաջարկություններ, 5.9% հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 19.9%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 79.7%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 1.6%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).

- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 0.7%-ը առնչվում է բնակարանային, 0.06%-ը կոմունալ-կենցաղային, 0.07%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 87.5% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 7646-ին տրվել է գրավոր: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 98-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է: